




ԱՐԵՎԱՆԻ
Կրոնական Գրական
Բնակչութեական



ՊԱՏՇՈՒԹԱԿԱՆ ՀՐԱՄ. ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅ ՊՈՏՔՈՒԹԵԱԿԱՆ

ՆՈՐ ԵՐԱՎԱՆ 1960

ԼՂ.
ՏՄՒԻ

«Սիոն» Խմբակական ամսագիր է հայոց հայության համար՝ պատմական և ժամանակական առարկաներու մասին:

"SION", an Armenian Monthly of Religion, Literature and Philology
Printed in JERUSALEM

≡ Ս Պ Ա Շ ≡

Լ. Տ Ո Ր Ի Ռ Ե Վ Ե Ր Ձ Ա Ն

1960

◀ Ուսումնական ▶

թի 9



ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ԵՂԻՋ Ս. ԱՐՔԵՊԻԿԱ. ՏԵՐՏԵՐԵԱՆ
ԹԱՏՐԱԿ ԱԴՎԵԼԱԿԱՆ ՄՐԳՈՅ ԱՔՈՌՈՅՆ ԵՐՈՒՍԱԼԵՄ

ԲՈՎԱՆԴԻՌԱԿԱՆ ԹԻՒԽ

ԽՄԲԱԳԻԱԿԱՆ

— Գահակալուրիւն Ամեն. Տ. Եղիշէ Ա. Պատրիարք Հօր

Երես

226

Հանդիս Գահակալուրեան Ամեն. Տ. Եղիշէ Արքապա. Տերեւեանի
Ենորհաւորական հեռողիներ եւ նույսիներ

231

245

ԲԱՆԱՍՏԻՂԾԱԿԱՆ

— Արցունի եւ արին
— Երազ չի միրէ

Պ.ՏԱՐԱՆԴԻ

249

Մ. ՄԱՆՈՒԿԱՆ

251

ԴԱՒԱՆԱԲԱՆԱԿԱՆ

— Մեր հաւատիմ հանդիշները

Ե.

252

ԾԱԿՈՐԻ ՆԵՐՄԵՆ

— Եկեղեցական - Քենտկան
— Պատօնական
— Զենագրուրիւն Սարկաւագաց

255

255

256



**ՍԻՈՆ-ի Տարեկան Բաժնեզինն է՝
բոլոր Երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 20**

Redaction of the Armenian Monthly SION

Armenian Patriarchate,

P. O. B. 4001

Old City - Jerusalem

Via Amman (Jordan)

≡ Ս Լ Ո Ւ ≡

Լ. Տ Ա Ր Ի Վ Ե Ր Ա Ն

1960

◀ Ո Ւ Ա Վ Տ Ե Մ Բ Ե Ր ▶

Պ ի լ 9



Ա Մ Ե Ն Ա Պ Ա Տ Ի Ի Վ Ե Ր Ա Ն Ա Վ Ա Ր Ա Ր Ա Ր Ե Ր Ա Ն

ԽՄԲԸՆԳՐԱԿԱՆԳԱՀԱԼԻԱԼՈՒԹԻՒՆԱՄԵՆ. Տ. ԵՂԻՃԵ Ս. ՊԱՏՐԻԱՐք ՀՕՐ

Յնորհիւ Աստուծոյ, Ս. Յակոբեանց Առաքելական Աթոռը դարձեալ կ'ունենայ իր Գահակալը, յանձին Նորին Ամեն. Տ. Եղիշէ Ս. Արքեպոս. Տէրտէրեանի Երեք ամիսներ առաջ, Նորին Սրբազնութեան ընտրութեան առիթով, այս էջերուն վրայ իր ընդհանուր գիծերուն մէջ տուինք Նորին Ամենապատուութեան կեանքին ու նկարազրին կարգ մը երեսները: Արքայական պաշտօնագիրը, որ վերջնական հաւանութիւնը կը բերէ այս ընտրութեան, առիթ մընէ, որպէսզի աւելի լայն զիծերով ներկայացնենք Գահակալին անձը և աելն ու գերը այս գարաւոր Աթոռին հոգեոր և ազգային իրականութեան մէջ:

Ամեն. Տ. Եղիշէ Ս. Պատրիարք Հօր Կեանքն ու զործը անցած է առաւելաբար վանակոն շրջանակին մէջ: Գաւազանակիր Թորգոմ Պատրիարքի, ֆառվարժանի և Ընծայարանի Տեսուչ, ուսուցիչ, և սարարապետ, Տեղապահ և ապա Պատրիարք:

Կրօնական, կրթական, վարչական և գրական ծառայութիւններու նուիրուած իր երեսուն տարիները զեղեցիկ կերպով կը ճշմարտեն անոր անձին ու զործին վրայ Յովին. Առաքեալի պատզամը. ու եր հաւատարիմ մինչեւ ի մահ և տաց քեզ զպսակն կենաց:

Հակառակ տարիներէ ի վեր իր վարած բարձր ու պատախանատու բազմաթիւ պաշտօններուն, իր համեստութիւնն ու պարզութիւնը ուշազրաւ ըլլալու չափ ակնբախ են: Անհատներու կենսազրութեան մէջ քիչ անգամ կարելի է տեսնել որ պատւոյ մէջ և գիրքերու վրայ յառաջդիմութիւնը զուգոնթաց ըլլայ անձնական արժանիքի: Իր գէմքը կը կնճոռտի ամէն անզամ, երբ մարդիկ մակդիրներով և տիտղոսներով ուղեն կոչել զինքը: Նորին Ամենապատուութիւնը միշտ խորհած է թէ ճշմարիտ մեծութիւնը այն է, որուն ատաղձը իր անձին մէջ կրնայ զսնել մարդ:

Փառափրութիւնը, որ կրօնական ու հանրային գործիչներու վտանգաւոր որդն է եղած ամէն ժամանակ ու ամէն տեղ, իր սրտին անձանօթ մնացած զգացումներէն մին է եղած միշտ: Այս իրողութեան կրնան վկայել բոլոր զինքը ճանչցողները: Եատ քիչերու միայն հասկնալի, ան խորշանքով նայած է միշտ բարձր գիրքերու և Աթոռներու. այդ էր պատճու որ տարիներով ան տեսակ մը փախուստով խոյս տուաւ ոչ միայն երուսաղէմի Պատրիարքական Աթոռէն, այլ նաև էջմիածնի Կաթողիկոսութենէն, երբ ամէն հնարաւորութիւններ ունէր բազմելու այդ Աթոռներէն մէկուն վրայ: Տարիներով անիկա տքնած ու նուիր-

ուած է Ս. Աթոռոյ մէջ իր բազմերես պարտականութիւններուն, ոչ թէ ի խընդիր անուան կամ համբաւի, այլ պարտականութիւնն մը կատարած ըլլալու գիտակցութեամբ միայն։ Աւետարանի այն ծառան է նորին Ամենապատուութիւնը որ իր Տիրոջմէն, այսինքն Աստուծմէ իրեն յանձնուած քանքարը չի կրնար չահաւորել յօգուտ ուրիշին։ Համակ հեզ, համակ կորով ու շարժում, անիկա կրնայ օրերով չճանչնալ անկողնոյ հանգիստը, զնելով ինքինքը փիզիքական ու մտաւոր անդադրում հետապնդումի մը վազքին մէջ։

իրեն եկեղեցական, իր աշխարհահայեացքը շատ նման եղած է Թորգոմ Պատրիարքին: Անցեալի պաշտամունքը, կրօնական բարձր ողին և ժողովրդային ծառայութիւնը կը կազմեն իր հաւատքին խարիսխները: Նորին Ամենապատուութիւնը կը հաւատայ անցեալէն դէպի ապագան երկարող մեր ճակատազրին, անոր մէջ զգալով միշտ Աստուծոյ մատը և հոգեկան բարձր առաքինութիւններով օժտուած մեր ժողովուրդին դերը: Բոլոր դաւանական և բարյական հանգանակներուն մէջ Կ'որոնէ հոգեկան միջուկը: Իրեն կրօնաւոր ու հաւատացեալ, նորին Ամենապատուութիւնը բնաւ չէ ենթարկած ինքզինքը այդ հաւատքին ողին եղծող արտաքին խստութեանց: Կրօնական նշարտութիւնները իր մէջ հրամանակարգ ըլլալէ աւելի, մտահայցողութիւն, յուղում և մարդկային յառաջիմութեան և ազնուացման ազգակներ եղող ուժեր են: Բանաստեղծական ու գեղեցիկ խորհուրդով մը՝ կրօնքին զգացումը անցեալին չտփ խոր և ապացային չափ երազուն կը բարախէ իր մէջ:

Խորահմուտ մասնագէտ մը չէ ան, եւրոպական պատրաստութեամբ, սաւ-
կայն իր ասպարէզին հարկադրանքը և ուշիմ միտքը զինքը զեղեցիկ քարձունքի
մը հանած են: Կը ճանչնայ մեր պատմութիւնն ու մատենազրութիւնը իր խո-
րութեանը և զեղեցկութեանը մէջ: Քիչեր իրեն չափ կրնան հաղորդ ընել զմեկ
անոնց հոգեկան, կրօնական և ցեղային արժէքներուն: Մեր անցեալ մեծու-
թիւններու պատկերասրահին մէջ՝ ան կը կենայ յուզումով և պատկառանքով:

իրեն զրչի և բեմի մարդ, անիկա միակն է մեր արդի եկեղեցականութեան մէջ, որուն խօսքն ու մտածումը իր հոգիին մէջէն զիտեն բանալ մեր անցեալի արժէքները, մեր կրօնքին լոյսերը և մեր ժողովուրդին մեծութիւնները: — Իր քերթողութիւնը յարատեն ձգտումն ունի ազգային ու հոգեշշունչ գծով մը կերպարել հայրենական և աստուածաշնչական պատկերներ, դէմքեր ու դէպքեր, առանց բարեպաշտիկ մնալու կեղծ փութիւնութեանը, Հայրենիք, Մագդաղինէ և Յիսուս մեկնակէտներ են իր խօսքին, համեմու համար բառերէն անդին մարդկային հոգիի ճանաչումին: Անոր ոպին, գործելու եղանակը, զիրը, կեանքը ըմբռնելու իւրայատուկ կողմերը թէւ կը զատեն զինքը որոշ չափով իր մատաիպարներէն, բայց չեն հերքեր զանոնք: Իր թափանցումին սրութիւնը զիտէ ճեղքել ու անցնիլ անցեալ կեանքերը և կենդանի մարդերը հաւասար ուժգնութեամբ:

Դաստիարակության գույքը համար առաջարկություն է առաջանալ այս պահի վերաբերյալ:

կան ու դաշն նախադասութիւնները և կշռադատուած ու բարախուն մտածումները, տեսական յուզականութեամբ, իրենց տիրական հիմյարին տակ դիտեն պահել ունկնդիրները:

Մեծ հեռապատկերներ ընդգրկող, բարձունքներու սկեռարիթ անձնաւութիւն մըն է նորին Ամենապատուութիւն Եղիշէ Արքեպոս. Տէրտէրեանը, նպատակը իր մէջ ամէն օր ապրող ու բնաւ չսպառող իրականութիւն է: Քանակով քաշուած զիծերու և թիւով ճշուած հաշիւններու մարզը չէ եղած երբեք. ընդհակառակն, խորշանք ունի ինքինքնին կաղապարներու վստահող անհաներէ: Գիտէ միշտ հաստատ ու վեր մնալ հոն՝ ուր ուրիշներ կը զայթին: Գիտուարութիւններուն դիմանալու, ապերախտութիւնները մարսելու և իր զափափարներուն ի խնդիր պայքարելու իր ուժը շատ քիչեր ունին: Աչ ոք կրնայ շեղեցնել զինքը իր տեսած ճամրէն, իր քիչ մը սկեպտիկ բայց քաղցր ժպիտին տակ պահուած կայ կամքի ամենէն մաքուր և պինդ մետաղը, զոր անիկա ցոյց պիտի տար այնքան ծանրօրէն, Սաղիմական վերջին չորս տարիններու անհաւասար պայքարին մէջ:

Բոլոր անոնք, հետեւաբար, որոնք մօտէն կը ճանչնան նորին Ամենապատուութիւնը իր իգձերուն անկեղծուութեանը մէջ և այս Հաստատութիւնը՝ իր կարիքներու խորութեանը մէջ, համոզուած են թէ նոր թուականի մը տուաւուր կը ծագի այսօր այս նուրիքական ժառանգութեանը չորս տարիններէ ի վեր ամպամած երկնքին տակ: Այս համոզուամը իր մէջ ոչինչ ունի պատրուպական, վասնզի արդիւնքն է անիկա ոչ թէ զգացումի մը, այլ սկզբունքի մը:

Այդ սկզբունքը այն մտածումն է ինքնին՝ թէ համայնքներու և հաստատութիւններու կեանքին շինութեան գործը ամենէն առաջ և աւելի կը կարօտի հոգեկան ու բարոյական ուժերու, որոնք երեան կուզան մեծ առաքինութիւններով ու կամքով զօրացած գործիշներու միջոցաւ: Գաղափար մըն է այս, որուն ճշմարտութիւնը հաստատող սրաւագրաւորէն գեղեցիկ պացայցներ քիչ չեն եղած մեր ազգային կեանքին մէջ: Հայութեան լաւագոյն օրերը կը զուզադիպին միշտ իր մաքի, բարոյականի և կամքի մեծութեան թուականներուն: Այդ թուականներէն իւրաքանչիւրին վերե կը սաւառնին դէմքն ու անունը Հաւատքի և Տեսիլքի մարդոց, որոնց մէջ միայն կրնայ ապրիլ «Աստուծոյ Հոգին», — առաջնորդութեան ճշմարիտ ուժը:

Անզամ մը ևս կը սիրենք հոս կրկնել, թէ այդ գործը դիւրին չէ. զիտենք թէ այս Աթոռը Գահ մը ըլլալէ աւելի Խաչ մըն է այսօր մանաւանդ: Գիտուարութիւնները որոնք կարգ մը խելակորոյս, կամապաշտ և այս Հաստատութեան թշնամի մարդիկ կը փորձեն հայթայթել, այնքան մեծ են, որ մարդ կը փորձուի մտածել թէ հրաշքի մը պէտքը անհրաժեշտ պիտի ըլլայ այս պայմաններու մէջ՝ ոչ միայն միտքերը լուսաւորելու, այլ նաև լրբացած ու վատշումներէն, թուրքի մը վայել մեղսակցութեամբ կը նային ազգապարծան այս Հաստատութեանը: Արքան ցաւալի է երբ այդ թշնամինները իր մէջէն են, իր անդամներէն, որոնք կը փորձեն խանգարել անոր ներքին կեանքին խաղաղութիւնը, իսկ աւելի մեծագոյնները՝ անոնք, որոնք, ողորմութեամբն Աստուծոյ

ներքին համերաշխութիւնը վրդովսղ այդպիսի վիճակ մը չեղած պարտգալին, ինչպէս է այժմ, չոր և խեռ զգացումներէ մզուած, կ'ուզեն բոլորովին հակառակ զգացնել հանրային զգացումին։ Մութին մէջէն դաւել շարունակող այդ մարդոց նկատմամբ միայն արհամարհնաք ու զգուանք ունինք, և որոնց պիտի չզի՞անէինք ակնարկութիւն իսկ ընել, եթէ հարցը դառնար անձի մը կամ անձերու շուրջ, և ոչ թէ դարաւոր և նուիրական Հաստատութեան մը՝ որուն վերաբերմամբ չենք կրնար ուզել անշուշտ որ պղտորուի մեր ժողովուրդին բարի միամտութիւնը։

Սակայն հակառակ այս տրաում իրողութիւններուն, զբարին միայն պէտք է գործել, շարունակելով հրաշքը որ միշտ կատարուած է այս նույիրական հաստատութեանը ծոցին մէջ, հակառակ չար մարդերուն, որոնք միշտ ուրիշն համար փորած իրենց փոսին մէջ թաղուած են, իրրե պատիժ իրենց վատշուէր ու յայրատ մտածողութեան և գործին:

Անհրաժեշտ կը նկատենք անզամ մը ևս կրկնել այն դերն ու դիրքը, զոր ունեցած է այս Աթոռը անցեալի մէջ, և զոր ունի ան այսօր, ոչ միայն միջազգային քրիստոնէութեան այս ոստանին մէջ, այլ մանաւանդ մեր եկեղեցական ու ազգային կեանքին համար, իբրև մեծ Աւիտավայր, Նուիրապետական կայք, ազգային սեփականութիւն, հարստութեանց զանձարան, և իր դերն ու դիրքը արժեցնազ Պատրիարքութիւն և իշխանութիւն, աշխարհի ամենէն հոգը և յառաջադէմ ազգերու և եկեղեցներու կարգին:

Հուսաւորչի և Տրդատայ, Վկայասէրի և Պահլաւունեաց, Բազրատուն-
եանց և Ռուբինեանց շինութիւններով, աւանդութիւններով և յիշաւակներով
սկզբնաւորուած և պայծառացած, Պարոնտէրներու, Ծղթայակիրներու և իրենց
արժանաւոր յաջորդներու բարի շանքերովն արդինաւորուած ազգային ու կրօ-
նական այս հրաշալի Ցունը, իրական փառք մը և մեր ժողովուրդին պատիւ-
թերող Հաստատութիւն մըն է, որուն հաւասարը գժբախտաբար այսօր չունինք,
և ան եր միւս, մենակը մեր առաջին և կրօնական ժառանգութիւնէն:

ի տես այս իրականութեան և փառքին, մեզի համար ըրպան ցաւը
անհասկնալի մնացած է թէ ինչպէս կընան գտնուիլ մարդեր, հայ մարդեր, ո-
րոնք փոխանակ հրճուելու, պարծենալու և իրենց հայու կարելին ընելու որ-
դարաւոր փոթորիկներէն և քանդութերէն անվթար մնացած այս ժառանգու-

թիւնը կարենայ շարունակել իր կեանքը, աղէտի մը հետևանքով ստեղծուած թանը այս կացութեան մէջէն, կը քարկոծեն զայն, արգելք հանդիսանալով բռնուանոց՝ որոնք իրենց հայու պարտքը կատարելու կը յօժարին նուիրական այս հաստատութեանը նկատմամբ:

Ա.Ա.Էն բանէ առաջ, պարտինք արդար ըլլալ և գուրզուրոտ, եթէ ոչ երու սաղէմի Ս. Յակոբեանց Միաբանութեան նկատմամբ, որոնք եկեղեցին ու ազգին խոնարհ ծառաներ են միայն, այլ այս փառաւոր նուիրապետութեան նկատմամբ, որ ազգին է, անոր այսօրուան պահապաններուն ըլլալէ առաջ:

Հինէն ի գեր այսպէս հայ ժողովուրդի սիրոյն և պաշտամունքին առարկայ եղած երուսաղէմի Առաքելական այս Աթոռը, ամէն ժամանակէ աւելի սահմանուած է մեր օրերուն գեր մը կատարելու կրօնական ու ազգային կեանքին մէջ, իբրև հաւատքի ու սիրոյ միակ այն փարոս՝ որոն կը նայի բովանդակ Սփիւրքի հայութիւնը:

Նախորդ բազմացան Պատրիարքներու օրով առաջ տարուած կրօնական, կրթական և ժողովրդային ծառայութեան համար թափուած ջանքերը, եթէ Տէրը կրթական և ժողովրդային ծառայութեան անսայթաք: Աւճինք այս հաւատքը, վասնի կամենայ, պիտի շալունակուին անսայթաք: Աւճինք այս հաւատքը, Նորին Ամենապատուութիւն Տ. Եղիշէ Ս. Պատրիարք Հօր Նման անձնաւորութիւն մը Պատրիարքական գահուն վրայ, կը նշանակէ կենսունակ մշանչենաւութիւն մեր այս դարաւոր Հաստատութեան գործին և նախորդ երախտապարտ Պատրիարքներու արդիւնքին:

Իր կրթանուէր և իմաստուն կեանքը և սրաի ու մտքի ձիրքերը ուրիշ գրաւական՝ թէ Միաբանական կեանքի մէջ տակաւ ստեղծուած խաղաղութիւնը պիտի մնայ տեսական, Ս. Տեղեաց մէջ մեր իրաւունքները պիտի պաշտպանուին որեէ ատենէ աւելի նախանձախնդրութեամբ և կորովով, և պիտի պսակուին բոլոր ակնկալութիւնները մեր եկեղեցին ու ժողովուրդին:

Մաղթենք որ Տիրոջ հովանին միշտ անպակաս ըլլայ շնորհագարդ Գահակալին և զինուորեալ այս Միաբանութեան վրայ, որպէսզի այս հանդիսական առիթով Հայ Եկեղեցւոյ բոլոր զաւակներուն հետ միասին կարենանք ձայնակցիլ սրբազան բանաստեղծի մաղթերզին. և նորհագարդ պայծառացը՝ զգաւան իշխանութեան մերոյ հայրապետին. զի օրհնեսցուք զքեզ, Տէր, այժմ և յաւիտեան - ամէն»:



ՀԱՆԴԵՍԻ ԴԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ԱՄԵՆ. Տ. ԵՎԻՇԵ ԱՐՔԵՊԻՄՈՒԽՈՂՈՍ ՏԵՐՏՅԱՐԵԱՆԻ

ԱՐԺԱՆԱՏԻՄ ՊԱՏՐԻԱՐԿԻ

ՄՐԻՋ ԱՐԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՄ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

9 Օգոստ. 1960ին, երուսաղէմի և Ա. Տեղեաց Կառագարիչ Հասան էլ Քաթիպ, կը հազորդէր Ա. Աթոռայ Հնարիալ Պատրիարքին թէ Նորին Վեհափառութիւն Հիւսէյն Թագաւորը հաճած էր իր արքայական ճանաշումը և հաւանութիւնը տալ երուսաղէմի Հայոց Պատրիարքի ընտրութեան համար և թէ որոշուած էր յաջորդ օրը, Օգոստ. 10ին, Կատարին պաշտօնական յահնուամբ արքայական հրաժարակին, յԱմեն, Պատմանի արքայական պալտօնին մէջ: Միաբանութիւնն ու ժողովուրդը այս աւետիսը առնելուն՝ փութացին Ամեն. Ա. Պատրիարք Հօր բնակարանը, իրենց խընդակական թիւնը յայսներ համար:

Յաջորդ օրը, 10 Օգոստ., երուսաղէմէն Ա. Ա. Պատրիարք Հայոց իր շքախոռնչով, բազկացած 15 հոգեգալականներէ և 20 աշխարհական անդամներէ, մեկնեցաւ Ամեն, եօթը ինքնաշարժերէ կազմուած պաշտօնական զնացքով: Ամմանի մէջ, երուսաղէմի պատգամաւորութեան միացան եօյնքան ազգայիններ և բոլոր միասին, ժամը ճիշգ 12ին, բազմաթիւ ինքնաշարժերով բարձրացան Պատմանի պալտօնը: Արայեալ ժաման, արակէն ներս մտաւ Նորին Վեհափառութիւն Հիւսէյն Ա. Պատգաւորը: Իրեն կ'ընկերանային իր փոքրիկ եղբայրը՝ իշխան Հասան, Յորդանանի Վարչապետ՝ Հազար Մաճալի, Արքունի Դիւանապետ՝ Պահճաթ Թալհունի, Արարտապետ՝ Ահմատ Լողի, պալատականներ և թիինապահներ, Նորին Վեհափառութիւնը զիւժաւորուեցաւ երկարաժեք ծափակարութիւններով և սկից հէններով:

ՅԱԽԵՆՈՒՄ

ԱՐԿԱՊԱՆԱՆ ՃՐՈՎԱՐՑԱԿԻ

Նորին Վեհափառութիւնը և իր հետեւորդները գրաւելէն վերջ իրենց տեղերը, Նորին Ամենապառութիւն Ա. Պատրիարք Հայոց կարգաց հայերէն իր ուղերձը ու Նորին Վեհափառութիւն:

Նորին, Վեհափառութիւն

Հիւսէյն Առաջին

Թայաւոր Հաւշիմական Յուղանանի Ձերք Վեհափառութիւն,

Ամբողջ Հայ ժողովուրդի, մեր Եկեղեցւոյ, Մերոց Յալորեանց Միաբանութեան եւ ինձի հանաւ, բեկրանի եւ միսիքարութեան բանկացին առի մըն և այսպահը, ուր եկած ենք Ձերք Վեհափառութենքն ընդունելու բարձրօրեն բարեացակամ այս օնորին, որով Ձերք Վեհափառութիւնը կը հանի վաւերացնել իմ ընտրութիւնն Արու Երաւանիմի Հայոց Պատրիարքութեան, հաստատիով նոյն տեսն այդ Արուին եւ անոր գանձալին գարուաւ իրաւունքներն ու առանձնաւունունքները:

Այս անմռուանալի առիրով, խոնարհաբար Ձերք Վեհափառութեան կը ներկայացնեմ Հայ Եկեղեցւոյ եւ Հայ ժողովուրդի ամբողջական Երախտագիտութիւնը եւ իմ անալիալ հաւատարմական զգացումներս: Մեր Երախտագիտութիւնը սրապին պարտկանութեան կը վերածուի, երբ յիշենք Ձեր աստուածարեալ նախորդներու եւ մասնաւորաբար Ձեր ազնի ու խայցը վերաբերութիւնը Հայոց Պատրիարքութեան եւ Հայ ժողովուրդի վերաբերմամբ:

Երախտագիտ Հայ Պատրիարքութիւնը, ի վաղուց անտի, իր պատապան Սուրբ Տեղեաց մէջ Հայ Եկեղեցւոյ եւ ազգի ունեցած իրա-



بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ، وَالْفَلَقُ لِلَّهِ الظَّاهِرِ (أَتَرْتَبَانَا بِالْإِسْلَامِ، وَلَكُونَنَا بِالْوَحْيَانِ، وَجَعْلَنَا
رَافِقَنِي بَعْدِ قُطْرَبَانَا، وَرَكْنَهُنَا مِنَ السَّلَادِ، وَجَعْلَنَا (أَطْرَافُنَا شَمَابِهِ)، وَجَعْلَنَا

عن السيد العذري سعى الشهادة لأجل فضيحة دفع ثمنها

بعد الارصاد ملئ ما عرضه حلب رئيس فريقنا فضله مرسلنا ولذلك لا تجيء

وَلِعَرْفَانِيَّةِ كُلِّهِ وَلِعَلَىٰ فِي رُوْحِهِ، لِبَنَانِ الْجَنْمِيِّ، طَعْنَاهُ فِي هِمَةِ السَّانَدِ وَوَرَبِّهِ لِإِنْسَانِ
مُتَّرِّمِهِ لِلْأَسْرَارِ وَالْمُكَبِّسَةِ، وَنَاعِيَهُ وَطَبِّقَهُ وَرَسَّا رَفِيْهُ بِهِ لِلْأَزْوَادِ الْأَفْلَقَسَةِ لِلْأَذْرَفَسَةِ
الْأَذْرَفَوَسَةِ، فَانْتَهَىَ الْمَدِّ الْأَعْتَرَفَةِ وَالْقَبِيْنَةِ تَعْلِمَهُ الْأَنْجَامَسَ دَنْدِيَ كُلَّفَسَا وَلَكَنَّهُ
لَشَيْءَهُ مَهْمَمَتِ الْأَنْجَامَ، فَبَهْتَهُ دُورَبِرَافِ الْأَكْلِيِّ الْأَوْتَرِمِ طَرَدَهُ الْأَلْمَعَسَ، وَلَمَّا يَبْرُجَ دَرَبَهُ
وَرَفَرَفَهُ دَرَلَهَمَ (الْأَنْجَوَةِ الْأَمْلَادَ)، وَمَنْكَهُ حَمَهُ مَهَارَسَهُ، وَمَنْظَطَهُ يَمْنَهُ طَفَرَهُ وَدَوْسَهُ
وَدَرَلَهَمَ الْأَصْلَادِيَّاتِ وَدَلَدَلَهَيَّاتِ دَلَالَهَنَّ، وَلَرَسَ لَرَزَفَهُ حَمَدَهُ الْأَصْبَحَ بَرَبِّهِ وَفَنَّهُ
وَدَلَلَهُمَ الْأَغْنَانِ دَلَلَهُلَلَهُ الْأَسْرَتِ الْأَزْعَمَيِّيِّهِ دَلَلَهُمَعَهُ.

مکتبہ فتح العلما ۲ صفحہ کشہ ۱۴۸۰ھ

مکتبہ میرزا علی بن احمد

سی و پنجمین

**ՃՐԿՄԽԵՑՆ ԱՋԻՇԶԻՆ
ՈՐԴԻ ԹԱԼԱՌԱԲ**

Յանուն գրած եւ ոլորմած Աստուծոյ եւ փառք Ամենալալին, որ Խալամութեամբ յաղբական եւ աստուածասէր ըրա զլմեզ իր սուրբ հաւատին մէջ եւ միացուց Մեր սիրտերը, ընորհելով Մեզի իշխանութիւն երկրի վրայ եւ սիրող բարեկամներ իրառու:

Մենք, Հիւսէյն Առաջին, Վեհապէտ Յորդանանի Համբական Թագաւորութեան, իրազեկ ըլլալէն յետոյ ինչ որ Մեր Վարչապետը Մեզի փասօռէն տեղեկացուց, եւ նկատելով որ Երուսաղէմի Հայոց Պատրիարքական Արքուր քափուր էր, եւ ամէն յարգանաց արժանի Ամենապատի Տ. Եղիշէ Արքեպո. Տէրտէրեանը արգէն ընտրուած էր Զիլիննելի 1379 Հինրի ներկայ տարւոյ 14ին, որ կը համապատասխանէ 8 Յունիս 1960ի, համաձայն Երուսաղէմի Հայոց Պատրիարքական ընտրութեան վերաբերեալ օրէնքներուն, Մենք կուտանի Մեր Արքայական Հրովարտակը, որպէսզի ան կարենայ ի գործ դնել այդ պատուին վաղեմի իրաւունքները եւ պարտականութիւնները:

Նկատելով նոյնպէս որ Մենք զինքը նախցած ենք իրեւ Մեզի Հաւասրիմ եւ Համբական գահուն նուիրուած մէկը, եւ վսահութիւն ունինք իր կարողութիւններուն, փորձառութեանց եւ ձեռնիասութեանը մասին, վարել կարենալու Պատրիարքարանի եւ համայնքի կրօնական գործերը, ապահովելով սէր եւ հաւասարութիւն Հայ համայնքի անդամներուն միջեւ: Մենք ընդունելով եւ հաստատելով այս ընտրութիւնը, այսու գրով կը յայտնենք Մեր Արքայական հանաչումը՝ Ամենապատի Տ. Եղիշէ Արքեպո. Տէրտէրեանի այս պատուին, հաստատելով եւ արտօնելով զինքը կիրարկելու վերոյիշեալ իր պատուին յատուկ իրաւունքներն ու պարտականութիւնները եւ ունենալու այն հումները եւ ապահարկութիւնները, իրաւասութիւնները, առանձնահանորդուր իրաւունքները, իշխանութիւնները, իրաւասութիւնները, առանձնահանորդուր իրաւունքները եւ ապահարկութիւնները, որոնք օրէնքով այդ պատուին կը պահպանեմ եւ կամ վաղեմի սովորութեամբ եւ կիրառութեամբ՝ գործնականապէս ի գորու են եւ կը վայելուին յարակցութեամբ այդ պատուին:

Տուեալ Պատմանի Մեր Արքունիքին մէջ 11 Սահարի 1380 ամի Հինրի:

Նորին Վեհափառութիւն

Մէծ Արքայի հրամանաւ

ՀԱՅԱ ՄԱՀԱՍԼԻ

ունենաւուն, ամենք մեծարուած Արռոնեակն մին է մեր Եկեղեցւոյ նուիրապետական կարգին մէջ, եւ յոկ Միաբանութեան մը չի պատկանիր, այլ ամբողջ Հայ ժողովուրդին։ Այդ իսկ պատճառաւ, երջանիկ ենք ոյսօց այն անհոգող վատանուրեամբ, թէ Զերդ Վեհափառուրեան օրով Սուրբ Տեղեաց մեր դպրաւոր իրաւունեները առարկայ պիտի մնան Զերդ Արքայսկան մեծուրեան բարի ուսագրուրեան եւ հզօր պատվանուրեան։

Այս պահուս, Զերդ Վեհափառուրեան բարենան վաւերացունով եւ Արքայսկան Պետարք կը մտեն Զեր կողմէ թթծի վատանուած Պատրիարքական պատօնիխ պարտակա-

առաջնորդուող Յուրիանանի Պետական անձնաւորութիւններու արեւեատուրեան եւ բարօւուրեան համար, որով Զերդ Վեհափառուրեան բարձր առաջնորդուրեան ներքեւ վերջ տուին չուս տարիներէ ի վեց Հայոց Կամերի մէջ ու ուուրգ ստեղծուած անբայցայի կացուրեան։

Մենք ձերն ենք, Վեհափառ Տեր, եւ կը մնան միօս հաւատարիմ Զեզի։

Ասունծոյ պատվանուրիւնը միօս անպակառ բոլ ըլլայ Զերդ Վեհափառուրեան վրային, ուպէսզի կատենակ իրազրծելի Զեր բարի մասդրուրիւնները ի ոտն Յուրդանանի



Հիւսէյն Թագաւորը Ամեն. Եղիսէ Պատրիարքին կը յանձնէ արքայական «պէտար»։


Խուրեանց մէջ: Խորապէս զգացուած եմ այս բանկափին ընորհին համար: Երախտապարտ զայցունեներով կ'անորեմ որ Տէրը եւկար եւ բախտաւոր տարիներ պարզեւի Զերդ Վեհափառուրեան, զահածառանզ իշխանին եւ Հաշմական գերդաստանի բոլոր ազնուածարման անդամներուն։ Կալորեմ նոյնպէս Զեր բարձր հովանակին եւ խմասուրեանը ներքեւ

Զեր ժողովուրդին եւ ամբողջ արաբական աշխարհին։

Խորին ակնածանօք եւ հաւատարմուն Մնամ միօս Զերդ Վեհափառուրեան բարձր հրամաններուն
ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊՈՒ. ՑԼՐՏՔՐԱՆՆ
Պատրիարք Հայ Սրուսաղիսի

Յետոյ կարդացուեցաւ սոյն ուզերձին արարերէնը, Մեծայարգ Տիւար Յակով Պէտքիանի կողմէ։ Ընթերցումէն յատոյ, Նորին Վեհափառութիւն Հիւսէյն Առաջին պաշտօնապէս Ս. Պատրիարք Հօր յահճնեց արքայական հրովարտակը և չնորհաւորից զինքը, յայտնելով նոյնպէս թէ այս բարերաստիկ առիթով Ամեն։ Ս. Պատրիարք Հօր կը չնորհէ նաև Յորդանանի առաջին կարգի պատուանշանը։ Ս. Պատրիարք Հայրը ժապագին մօտեցաւ Թագաւորին, ձեռնուեցաւ, և իր սրազին չնորհակալութիւնը յայտնեց, իրին ընծայուած այս բացառիկ չնորհին համար։ Բոլոր ներկաները, եպիս-

տութիւնն ու ժողովուրդի բազմութիւնը Վանքի աւագ մուտքին առջև կը սպասէին նորին Ամենապատուութիւն Ժամանամին։ Ժամը 5ին հասաւ ան, երբ իջաւ ինքնաշարժէն, խանգամաօրէն ծափահարուեցաւ ամէնքէն։ Եետոյ թափօրով առաջնորդուեցաւ Պատրիարքարանի գահինը։ Ս. Պատրիարք Հայրը բարեմապիութիւններ ըրաւ Յորդանանի Վեհափառ Թագաւորին արեւշտառիան և աշխարհի խազաղութիւնն համար։ Ներկաներու հոծ բազմութիւնը մեկնեցաւ Սրբազն Հօր աջը համբուրելէ վերջ, իսկ Միաբանութիւնը և աշխարհական ներկայացուցիչները պատուասիրուեցան խմբէքով։



Ամեն. Ս. Պատրիարք Հայրը՝ Թագաւորին, Վաշազեմին
և Միաբանութեան անդամներութ նես։

Կոպուսերէն սկսեալ, մօտեցան նախ Թագաւորին և ապա Ս. Պատրիարք Հօր, առաջինին իրինց չնորհակալութիւնը և երկրորդին իրինց չնորհաւորութիւնները յայտնելով։

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը իր հնասւորութիւնը հրաժեշտ առնելով Վեհափառ Թագաւորէն մեկնեցաւ Ժամը 3.30ին, Պատրիարք Ս. Հայրը իր Հքախումբով Ամմանէն ներւազէմ վերագրածաւ Աշակեր-

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱՅԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՍԻՆ ՀԱՄԱՐ

Գահակալութիւն հանդէսին թուականը որոշուեցաւ 21 Օգոստոս 1960ի կրթակիլն Անկէ յետոյ սկսաւ պատրաստութեան ըլլանք։ Ամրազջ Մայրափառիքը եռուգեսի մէջ է։ Լինգանաւը մաքրութիւն, նորոգութիւններ, յարգարում և գարգարում ամէն կողմէ։ Հրաւիրագրեր կը սպազրուին հայե-

բէն, արարիբէն և անգլիբէն, քանակցութիւնները կը կատարուին կատաֆարութեան և Պատրիարքանին միջն, հանդիսութեանց կարգադրութիւններուն մասին և Ամէն հոգ կը տարուի Կարեի եղածին չափ միջն չոգ կը տարուի Կարեի եղածին չափ այս թացառիկ չանցէս:

Գահակալութեան օրուան վաղորդայնին
ամէն ինչ կարգին է արգէն : Վանքի աւագ
զուռը, հեղեղիցի մուտքը և Պատրիարքա-
րանի կրնակ մուտքերը ըրջանակուած են
դաշտ ճեղերով ու ծաղիներով և զար-
գարուած Յօրգիանան պրօներով : Դըր-
խաւոր մուտքերուն վրայ զիսկուած է

ԳԱՀԱՆՈՒ, ՊՐԹՄԱՆ ՀԱՆԴԻՇ
Ս. ԸՆԿՐԵՏՈՎ ԲԱԼԱՐԻՆ ՄԵՋ

21 Սգոստասի կեսօրէ վերջ ժամը 4ին,
ժողովուրդը արդէն խակ խանուած է Տա-
նարի զարթիթին և բակին մէջ։ Ամենանի և
Ելուսազէմը Հ. Մ. Բ. Մ. Ի. և Հ. Ե. Մ. Ի.
սկառուսակն խումբերը կը հսկեն կարգա-
պահութեան։ Օտար և հայ հրաշիրեալները
իրարու հանե կը զրաւեն իրենց յատկաց-
ուած տեղերը, եկեղեցւոյ զասին և առ-
եանին մէջ։ Մասնաւոր յանձնախումբ մը
գլխաւորութեամբ Շամիլ Կահուարի, կը



Պր. Մարտիրոս Մարոսիան կը կարդայ առաքերկն արժայական հրովարտակը:

Հիւսէյն Թագւորին՝ պատկերը, լոյսերով
շրջանակուած։ Եկեղեցին իր տօնական ռ-
բերու պերճանքը զգեցած է։ Կանթեղներ
ու մամեր կը փալփին ու կը պլաւան քաղցր
խոհանքներով։ Աթոռներ շարուած են ատշ-
եանին ու զոյդ գասերուն մէջ։ Գետինը
ծածկուած է գորգերով։ Պատրիարքարանը
շակուած, յարդարուած ու կահաւորուած է
կանոնաւոր կերպով։ Ամէն ո.ք սպասումի
մէջ է վաղուան մեծ օրուան։

վարէ տեղաւորման գործը՝ ժամը 5
արդէն իսկ լեցուած է եկեղեցին. հոգե
բական հրամիրեալները տեղաւորուած
ամիսակողմեան գասը, կրտպատուաներ և Կ
ներկայացուցիչները՝ աջակողմեան գա-
կառավարական պաշտօնատարներ, զինո-
բականներ և աւագանին՝ ատեանը, ժո-
ղութը լեցուցած է եկեղեցիի երկու ի-
ւերը, զիրնատունը զրաւած են կանա-
խոկ հոծ բազմութեան մը լեցուցած է նո-

պէս եկեղեցին գաւիթը: Ա. Յակոբը նախընթաց երեսուն տարիներուն մէջ, հանդիսածուն չէր եղած նման բազմութեան մը և խանդավառութեան, ուշագրաւ ըլլալու աստիճան:

Միարանութիւն և աշակերտութիւն Պատրիարքարանի մէջ կը պատրաստուին և Հրաշափառուի: Վեց եպիսկոպոսներ չորսանիբազ և եմիփորուններով, գարգուպեաներ՝ չուրջառազգինս, դպիրք՝ շապիկներով: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը և կը զգեստաւորուի և կ'անցնի թափօրին զլուխը, Սրտաթունդ կը հնչէ ո Հրաշափառող Պատրիարքարանի Կամարներուն տակ ու թափօրականք ծանրօքէն կ'իջնեն եկեղեցի: Ժողովուրդի հոծ բազմութիւն մը լեցուցած է եկեղեցոյ գաւիթը և ըրջակայ տանիքները: Ակուտները պատուի կը կննան երկուստաք, եկեղեցի մուտքին՝ թափօրը կ'ուզգուի դէպի Ս. Գլխազդի մատուողը, ուր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը կ'երկպազէ և կը ինկարէ չուրջառակի, մինչ զպիրներ կ'երգին ուր էն յէսութեան: Արդւոց Արտաման շրագականը: Մրագանը Ա. Գլխազդի մատրան մէջ կը կատարէ եկեղեցի մուտքի իր ուխտը: Դպիրներ կ'երգին ուր բախ լեր շրագականը, ու թափօրը եկեղեցոյ մէտեղէն կ'առաջնորդուի գաս, ուր հանդիսադիր Մրագանը կ'առատասանէ եկեղեցի մուտքի սաղմոսը: Ուր բախ եղէ ես ուր տոէին ցիս ի տուն Տեառն երթիցուք մեքք, յարակից քարոզով և ազօթ քով միտաեղ: Այս կարճ արարողութենէն գերջ դեմ կը բարձրանայ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, առաջնորդուած կից եպիսկոպոսներէն: Բեմին գրայէն կը կարգացուի Արքայական Հրաժարտակի նախ արարերէն բնազիրը՝ Պր. Մարտիրոս Մաթոսեանի կողմէ, ապա նոյնին հայերէն թարգմանութիւնը՝ Գերը. Տ. Հայկակուն պատ. Արքահամեր կողմէ:

Խակ Հրովարտակի անգլերէն թարգմանութիւնը կարդաց Պր. Վարդան Տէլ Վարդաննեան:

Ապա, Գերը. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան կը կարգայ հետեւեալ ուզերծը առ Ամեն. Ս. Պատրիարք Հայր:

Ո Ւ Ա Ն Ր Ձ

ԳԵՐԸ. Տ. ՀԱՅՐԻԿ ԵՊՍ. ԱՄԼԱՇԵԽԱՆԻ
Հայուած Ս. Ցակօբեանց Ցանարին մէջ, Պատրիարքական ասան յանձնելու առքիւ:

Ամենապատիւ. Ս. Պատրիարք Հայր,

Այս հանդիսաւուր պահուն, սրի բերկանկով է որ յանուն Ս. Ցակօբեանց Միաբանութեան եւ Ազգին լուրեան կ'ողջունեմ Ձեզ Ամենապատուուրիւնը այս դարաւոր ու նուրբական Արոռին վլայ, որ կուզայ իբեւ օրինաւոր պետք վարածելու սուզի եւ եւսուրեան բայխի սիրտերն եւ միեւնոյն ատմ լիցնելու տարիներէ ի վեր բախում մնացած այս Արոռը, ամենան արժանաւուրապիս:

Առանելական այս Արոռը՝ որ զան է Ս. Ցակօբու Տեառնելուրայք առաեւալին՝ նուռ ասդիմ առաջին եպիսկոպոսապետին եւ Պատրիարքին, ոչ միայն միջնաբերդն է Հայուանեայ Ս. Ամենալուր նուրբափեռութեան, այլև արքարքիմներն մին է, Զայուրի բան պատասենին ու զուրգութեանին արձանացած, որուն այնքան սեռն ու սեր սիրով կապուած է քէ բնախտարին եւ քէ սիրտինի ամբազազ մեր ժողովուրդը:

Հայ ժողովուրդի նակատարին զուզբնրաց, Ս. Արոռն ալ ինչպէս անցեալի նոյնապէս մեր օրեւուն, անցած է հուրի եւ սուրի ընդմէշէն եւ սակամ, վառէ նախախնամուրեան եւ իր հօրոց պատապան սուրբեռուն, կանգուն մնացած է աւերէ ու աւարէ դարերու ընթացին, նակառակ շարին դարանակալ մետնայութեան:

Մեծ է մեր ուրախութիւնը երբ դարձեալ Ս. Արոռը կը բախտաւորուի անբնմիջաբառ Շառունակիլու հովուապետական իր յաջուրիւնը Աստուծոյ անհասանի կամով կը մենէ Միաբանութեան ընթուրեամբ, ու այսօր Ձեզ Ամենապատուուրիւնը կը մենէ վառին մէջ Հայաստանեայ Ս. Ամենալուր, հայորդ անու գեղեցիկուրիւներուն, յոյսերուն ու երազեւուն, ու վասահ իմ քէ Ձեզ Ամենապատուուրիւնը հուրման ու ծառայական անութեան բափով պիտի շառունակի իրագութել աստուծանանոյ ու նուրբական իրագութել աստուծանանոյ ու նուրբական այն գործը՝ որով Ս. Արոռոյ երախտաւուր ու եւամեծ նախնիբները անձնուրցու-

բամբ, զոհաբերութեամբ ու մանաւանդի հաւատքով առաջ են, անցեալին մէջ եւ դեռ մինչեւ երկի, Ասունց փառքին ու այս տան ապագաուրեան ի խնդիր:

Ակենապահի Ս. Հայր, մեքի ու հոգիի
այն շնորհեցր ոռոցավ մեծապէս օժուած
է, արձեկի ու արժանիքի վերածուած են
այնուն գելցելորեն ինձնաւչան նրբերով եւ
Ձեզի միայն յոտուկ իմաստութեամբ եւ բաւ-
խած է զանոնի այս եռ իրական Հաւատու-
թեան բազմեւես զործունեութեան բոյոց
մազերուն վրայ՝ իրաւուն, իմացւուն, իրաւուն,
դրաւուն, բաւութեցւուն ու վարւուն, սիրազին
մերեկի մը խոյանիով:

Ս. Արութ հանդիսացած է Ձեր բոված-
դակ գործունեութեան միակ տապահեղը՝ ո-
րուն հանդեկ տաճած Ձեր սեր հայրքի մը
բուբունքի առած է, մղերվ զեզ անեա-
խախնդիք, բոլորանուեր անու նույրան
սպասին՝ որ իր բարձ համբաւի, չ-ընի Դո-
ժուածին համար անկատելին կատելի բրիգ,
որպէսզի այս ժամանակաշին պատուառա-
պէս ու արժանափայլ փառով դիմէ իր
պարագան, կը ծանու ու ոչոյն անսերիւ
նպատակին, ինչպէս եկած է ան դարեւեն
ու գարձեալ դաշերուն դիմելու բարի ու
ամին առաջադրութեաններով:

Ազնիւ, բարի ու գրոս է Ձեր հոգին.
Երիտոննեական առաքինութիւններուն պատկն
է ան՝ որ կ'արտափայլի Ձեր վրայ, առաքե-
լական ժիպարի մը ամբողջ հեապոյրով ու
գելիցկութեամբ, բաւսնելով ձրխաբար ամեն
ինչ խառն գործնականուցած երիտոննե-
րեան, զրուրեան ու բարութեան առաքի-
նութիւններուն:

ନୀମାଙ୍ଗଳିକାନ ପି ହିନ୍ଦେଖିବା ଅଯି ହାରାଇଲୁ
ରାତ୍ରିବିଶାନିପିରକ୍ଷିବେବେରୁପି, ଉତ୍ତରାଧିକ ଲୋଜ,
ପୂର୍ବାଧିକ କେବ ପିର ତିରିରୁ ଅଧିକ ପିରେବେବୁକ
ରାତ୍ରିବିଶାନିପି, ଅପିଲାବନୀକେ ପି ଦାନାଧିମାନେ
ଶ୍ରୀରାମାନୁରଥିବେବ ଉ. ବାକୁପିଫେବାନ୍ତ, ପିରିବ୍
ହିରାଖବନ୍ଧୁରେ ହି କାରାପିଲାରେବାନ ପି କାରି-
ପିରକ୍ଷିବାନ ଜାଫିକ ଆତ୍ମାର ଅଧିକ ହାନିଜୀବାନାଜ
କେବ ପାଇବେଲାକାନ ଫରେଦି ଜାଗନ୍ନାଥରେବାନ ପି
ଅପାକାର ରୁଅରି ଅପାକାରରୁକ୍ଷିବେବେରିବ ମେ,
ଅଟର ମେତ ସବୁନ୍ତିଲା ଉ. କ୍ରାନ୍ତି ଅଧିକାରୀ
ରେବାନ ପି ରାତ୍ରିବିଶାନିପିରକ୍ଷିବାନ ଆତ୍ମାଦାନିବାନ
ପି ଅଭିବନୀକେ ଫରେଦିବ ଅରଧିକିବାନାରେପିରକ୍ଷିବେଦ:
କ୍ରି ଆଜିବାର ଜୀବନପି କେ ଅଳ୍ପକାଲିପିରକ୍ଷିବାନ,
କ୍ରି-ବ ପି କ୍ରି ଜୀବନ, ଉତ୍ତରାଧିକ ଲୋଜ,

մատուցանեմ յարգսնեղվ ԶԵՐ օծեալ ձեռին-
բուն — կը պահէ գեր դուզր ընթիր այն
հոյին՝ այս Արքուոյ մեծիմաս հայրապետե-
րան որոնք ատենին նոյնան սիրով, բա-
րուքիամբ ու կրակով առած էին նոյնան
օրինուած մատերուն — կը մարդեմ ուսա-
զինս որ ըլլայ ան ծավկեալ զաւազանը Ա-
հարունի, որտե բարիք, օրիննենք ու սկզ նա-
ռազարք բոլոր անոնց՝ որոնք այնքան կա-
րիքա ունեն անոք:

Խորին երախտագիտութիւն Ցորդանանի
Համբական երթասարդ ու իմաստուն Վե-
հապետին՝ Նորին Վեհափառութիւն Հլւակե
Թագաւորին, որ հանեցաւ արքայական երո-
վարտակով հաստատել Ձերդ Ամենապատու-
թան պատրիարքութիւնը վաղեմի իրաւ-
ութիւններով ու առանձնաշնորհումներով
Եւ պատուեց զնեզ և. կարգի պատուանեա-
նով, հաւաստիք իր արքայական վասահու-
թան Եւ օրբոյ առ Ձեզ: Թող փառաց Եւ
կենաց երկնաւոր Թագաւորը երկար, երջա-
նիկ ու բարդաւան տարիներ պարզեց մեր
սիրեցեալ Վեհապետին ու Համբական ազ-
նուական գերպատանի բոլոր անդամներուն:

Այս առքիւ կը յաջնենեք նաև մեր ընոր-
հակալուրքան զգացումները Ս. Քալախիս ու
սրբածեղեաց Գևոմատուք Կառավարչին, Հա-
սան ել Քարիսային, որուն ուղղակառուրքան,
խմասուրքան եւ արդարափրուրքան ընոր-
նիւ խսդազուրքան ու բարգաւանուրքան
մեջ կը պահուի Ս. Քալաքի ապահովու-
թիւնը եւ հոմանիներու ներդաշնակ համե-
րախուրքինը, իր փորձ կառավարուրքան
եւ անաշառ կեցուածին հիեստաենով, այս-
պէս արժանանալով հասարակաց սիրոյն եւ
արագանեն:

Աստածային օրինութիւն եւ Ս. Աքռուոյ սուրբերուն բարեխօսութիւնը կը հայցենք Ձեզի համար:

Այժմ յարգանեով կը նրաւիրենք Ձերդ
Ամենապատուրիւը կատարելու ծերադիր
կանոնական իր ուխտը Ս. Սեղանին առջեւ:

Ուղերձի ընթացքին, երբ կ'լսէր Փախանորդ Արքազանի ջեր Ամենապատութեան կը յանձնենի. Երուազէմի Պատրիարքութեան Հովուապիտական գաւազանը կը յանձնէ Պատրիարքական իշխանութիւնը խորհրդանուու ուստի (ասսա) Ասա Ս. Պատ-

բժարք Հայրը ծունդի հկած Ա. Անգամին տաջե, զիսաբաց և ծանր ու հանդիսաւոր կրպով կ'արտասանէ իր ուխտը:

ՈՒԽԸԸ

Խոսանամ եւ ուխտեմ առաջի Ասութոյ եւ առաջի Մրոյ Խեղանոյս:

Խինի մօս եւ հաւատարմութեամբ հոկել գործադրութեան կարգաց, կանոնաց եւ աւանդութեանց Միաբանութեան Առափելական Արուոյս Ս. Յակովեանց:

Ուխտեմ լինել հաւատարիմ Ազգիս և Հայրապետական լիւրին իշխանութեան Ամենայն Հայոց, կարգաց եւ կանոնաց Հայաստանիաց Սուրբ Եկեղեցից:

Նաեւ ուխտեմ կալ մնալ հաւատարիմ Նորին Վեհափառութիւն Յորդանանու Հաշիմական Թագաւորին եւ իմաստոն եւ արդարաւոր Կառավարութեան նորին:

Ընկայցի զուխտ մեր եւ զգործ ձեռաց մերոց ուղիղ արացոց ի մեզ Տէր, եւ զգործ ձեռաց մերոց յաջողեցոց մեզ. Ամեն:

Աւխտի կատարումէն զերջ բհմի վրայ եղող զեց եպիսկոպոսները իրենց ձեռքիք զնելով Ամեն. Ա. Պատրիարք Հօր գիտուն՝ արտասանեցին ոՊահպանիչ ոը յուզուած ձայնով, և աստուածային օրհնութիւն և օժանդակութիւն հայցեցին նորընտիր Գառհակային համար:

Յետոյ, Նորին Ա. Օծութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ներկայացուցիչը, Գերշ. Տ. Հայկացուն Եպոս, կարգաց իր Հնորհաւորականը, յանուն էջմիածնի Հայրապետին:

Ամենապատիւ

Տ. Ելիոտ Ա. Արքապիսկոպոս Տէրեւեան Արժանինիր Պատրիարք Առաք. Ա. Արռուոյս Բարիխնոմ եւ Ամենապատիւ Մրազան Հայր,

Յանուն Նորին Ա. Օծութիւն Տ. Տ. Վազգեն Ա. Մրազանգոյն Կարողիկոսի Ամենայն

Հայոց, եւ յանուն Գերագոյն Հոգեւոր Խորհրդոյ Մրոյ էջմիածնի, լիազօրուած են այս հանդիսաւոր պահուն, հաղորդի Ձերդ Ամենապատութեանը Վեհափառ Հայրապետի Մարտաները եւ ընուհաւորութիւնները, Զեր Գահակալութեան այս բաւերատիկ առիրով:

Սուրբ էջմիածնի սիրոյ ծայնն է այս պահուս որ կը հնչէ նուիրական այս Մրազան կամարներուն տակ: Զայն մը օրհնութեան, ծայն մը ուրախութեան եւ ծայն մը ցնծութեան: «Առանց էջմիածնի չկայ Հայ ժողովուրդ, եւ առանց Հայ ժողովուրդի չկայ էջմիածնին»: Սուրբ էջմիածնի սիւները հանգչած չեն միայն Այրարատեան զաւոք հողին մէջ, այլ անոնք խորսիստած են ամեն մէկ Հայու սրբի եւ նոզիք վրայ, սնխափա կերպով, բած է մեր անման բանասեղծներն Աւետի Խառնակեանը:

Դաւեւ, դաւեւ Շառունակ, Լուսաւորչի եւ Սուրբ Գիշապրի կանրեզներուն մահուր լոյսը իրարու նես զօղուած, մէկ կամար կազմած եւ լուսաւորած են Հոյ հաւատացեալ ժողովուրդի սիրտն ու հոգին ի սփիւռ աւխարիի: Դաւեւ տռաջ Աստաւածորդին իջաւ այս Մրազան Քազաքին վրոյ. Աստուածութին իջաւ նաեւ Այրարատեան դաշըր, եւ այնտեղ կերտեց Հայութեան Մրութիւն Սրբոցը, Սուրբ էջմիածնինը:

Ճշմարտութեան լոյսին տակ, երբ այսօր իր բովանդակ տեղաբնով զարդարուած է Առանձական Սուրբ Արտուր, երբ ամենուն սիրտին մէջ խինին ու ծիծառ կայ, նա կը տարածուի, կը մեծնայ եւ կը հասնի մինչիւ Սուրբ էջմիածնի կամարներուն տակ, եւ կ'ուրախացնի տամենմէկ տարիներէ ի վեր տրսմանցն տամենմէկ տարիներէ: Հոգեւոր այս Տանը զաւակներուն նետ, եւս տռաւել ուրախ ենաւ Ազգիս Վեհափառ Հայրապետը, իր բոլոր զաւակներով միասմբ, եւ ինչու չէ նաեւ Հայաստանեայ Աստեղական Սուրբ Եկեղեցին:

Զեր հաւատարմութեան նուիրական Ուխտը, զոր ծնկաչով եւ յուզամակ կատարեցիմ այս հանդիսաւոր պահուս, հանդէկ Սուրբ էջմիածնի եւ Ամենայն Հայոց Հայրապետին, խորապէս կը յուզէ եւ կ'ուրախացնէ մեր բոլորին հօգիները:

Ամենապատիւ Մրազան Հայր, բող հրե-

չեն, և նշան զանգակերը մեր եռութական
Մրգավայրեռան, եւ իրենց ձայնին բող միա-
ցնեն մեր արցունքն ու ուրախութիւնը, ի
մսիքառութիւն մեր տառապած հոգիներաւ:

Ահա այս զբացումերով, անզամ մը եւս
Նորին Սուրբ Օծութեան Կեհափառ Հայրա-
պետ անունով կը տնօրինութենք Ձեզ, եւ
կը մաղթեմ որ Աստված իւ աւելի բարի եւ
ասք հառաջարիները տռաջին անզամ ցոյչ
այս սրբալյարի զմբերին վրայ, եւ Ձերդ
Անենապատութեան օնորին խալսդ եւ եր-
ջանիկ օրեր, ուղեսդի գույք առաջնորդէն
Ձեզ յանձնուած հօռ առ ջուրս հանզսեանս:

Թող Ամենաբարին Ասուած եղանիկ եւ
խաղազ եւ երկու կեան պարզեց մեր սի-
րեին եւ Երիտասարդ Թագաւորին, Հիւսէյն
Ալաջինին, եւ Հայիմական Թագաւորական
Տանք բոյր անդամներուն. ամէն:

Անկէ վերջ, իր չնորհաւորականը կտրացաց Նորին Ս. Օճռւթիւն Կիրիկիոյ Կաթողիկոսին Ներկայացնելիքը՝ Տերը. Տ. Խորէն Արքեպոս. Բարոյեան:

Ա-ԽԵՆԱՊՈՏԻՒ ՄԵՐԻԱԳՅԱՆ ՊԱՏՐԻՈՏԻ ՀԱՅՐ.

Հայեկան անխառն հանոյք է մեզի եւ
մեր զիսաւորած պատուիրակորեան համար,
ու նաև մեծ պատիւ՝ Մրցոց Յակոբեանց
Միաբանութեան պատուրեան մէջ շեղ հան-
գուոն մը կազմոյ այս ուրախ հանդեսին
ներկայացնել Մեծի Տանն Կիրիկիոյ Ն. Ս. Օ.
Վեհափառ. Տ. Տ. Զարեհ Ա. Կարողիկոսը
Եւ անոր ենթակայ թեմերու Ազգային Մար-
մինները եւ բերել անոնց անկեղծ օնորհա-
ւառութիւններն ու ուրագին մայրանները
Ձերդ Ամենապատուրեան եւ Մրցոց Յա-
կոբեանց զինուարեալ Միաբանութեան :

Զեր ընտուրիքներ յլրո՛ եռուսադիմի
Հայոց Պատշիստուրքան եւ այդ ընտուրքան
վաւերացումը Յորդանանի Հաւայսական Թա-
գաւորութեան Վեհապետ Նորին Վեհափա-
ռուրիկն Հիւսիեց Թագաւորին կողմէ, վեր-
ջակեցը կը զնէ ուս ցաւալի երեւոյթներու
եւ բարոյական ներքին խոլովներու, որոնք
պատահեցան այս Մայրավանեն ներս, ու կը
յուսանէ, զանոնէ կը յանձնէ Առափեյական
այս Արոռի պատմութեան, որ դրօւորում
է հայկական պանծալիք ողիքն, եւ զոր կեր-
տող մեծ զագործներուն բարոյական նեու-

ძիნ ու պայծառափայլ լոյսի հառազարում-ներուն ներեւ մռացութեան տրուած են ժխտական բոլոր մարդիկին ու անոնց պախա-րակեին արաքները :

Յայսենի է բոլորին, թէ հակառակ Կիլիկիոյ Ս. Արքունի ալ ներքին զալարումներուն եւ ընդհանրապէս Հայաստանից Եկեղեցին առզնապեցնոլ ցցցումներուն, Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կարողիկոսը ուղափիր անձկուրեամբ կը նետեւեր Երևանակմի Հայոց Պատրիարքութենն ներս կատարուու խանիչ անցուգաճեռուն եւ ի սրբ կը մարդեւ, որ օրինաւորութիւնը լեռահաստառուեր այս փառապանձ Հայաստուրեան մէջն ալ, ու անգամ մը եւս տիրեւ Մրցոց Յակաբեանց Միաբանութենն ներս Քիստոնեական սիրոյ եւ անկեղծ եղբայրութեան ողին, որ աստուածափիր եւ մնայուն օրենքն է որեւէ Միաբանութեան՝ միւս փոփոխելի կանոնագրութեանց կարգին:

Зиатуалың իրազուրիбелүк, рөл համայնք մարգ-
бын күрбүлүп һөндүклемд եւ բարոյимкаан աննаш-
хынбарынг տաғынның մін կ'անыңк այсөр: Өз
міншін Հայրատанында аяг һыңбыргүйн, алж ғұри-
санында қызын, ғылар һыңбыргүйнендер, եւ թіншінин-
гашақта қызындар әдәл қызындың առջеті են եւ
պәнжигары մәнід' ծиуәләнә һінде ғилемесене-
рханың դқд, ол զынбағасын կітепчаралыңынан
ор յиғанын զынбағасын մөрхін մінде ծиуәтад,
мөлөртегендеңде үршай һә ըніштер ըніштер զынбағ-
шындар մեր әл әңдәгүйн: Ән եңбекпәрәвәлән եւ
әңдәгүйләкән յиғанын үрхін կөр қызбұл տослуа-
дамаңтар әлж әндең, որғанбенеңде ғұриսондаки-
лаң һыңбыргүйнендер, оғаның қарағайын յиғанын
Հаյратастада үршай մեր Սиуәлә һыңбыргүйн, եңбек-
шашақта ғылдашында են եւ անқылатасында
бенасы үлбәниләкесе կөр գаедебән առақтасы-
пәкес «үйнанын үйретелю համаң, ғын» կөр
һыңбыргүйн «өңірнаны үлбәнел հосиһен»: Եւ որғанбай
қарағай үлпән үйретенәнәкән յиғарашында әр տәнбі-
ажа պәнжигарын մінде ի әнде ғұриսондакилаң
մեր Ս. Қарсілін եւ Հայратастада аяг փото-
պәнід һыңбыргүйен ու պәнжигарын մեր ძәңде-
ғылурғайын, Մінде Տианы Կүлілікпай Վ. Қынбағашов
Հауяршашаң կөр նіңкәс րէ ғилемашынад սи-
рең եւ անқынад յиғарашында үлбәнеленең үрг-
ешаңын ғылдашын үрхін մը անкүндеңе һ
әңбекшашақта ғылар Արоппендер մінбән
ու ғылар әңбекшашақта մін, արտасында үлбән

հայ բ սշլուրիւններէն ներա հայ հոգեւոր եւ մակուրային արժեկներու պահպանման հիմնական տևակիւնքներէն:

Այս մասնամեթերով եւ լաւացոյն իշմերավ, յունուն Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետին, զերմօրէն կը ընուհաւուրեն Ձեզ, Ամենապատի Մրգազան Պատրիարք Հայր, Ձեր բարեբաստիկ ընթրուրեան առջիւ, ի արտէ մաղրելով ու Ձեր գահակալուրեան այս հանդէսը հոգեւոր ու բարոյական վերելիք սկիզբ մը ըլլայ Երուսաղէմի Մրցոց Յակոբեանց Միքանուրեան համար՝ որուն եւս կը ներկայացնենք սրազին ընուհաւուրիւններ եւ անկեղծ խնդակցուրիւն-

Ո Խ Խ Տ Բ Գ Ա Ր Ո Զ Ը ԱՐՄԱՆ. Ա. ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ

Հանդիսաւոր ուխտը, զոր կատարեցի Աստուծոյ սեղանին առջեւ, ով իմ ուխտեալ եղբայրներ եւ ժողովուրդ Հայոց, կեանին մնացեալ մասը աւելի սերուեն կը կապէ այս նուիրական Հաստառուրեան, դնելով զիս, ձերինեն աւելի բաժինով մը, պատասխանատուրեան մը հանդէպ՝ ու այս Արունին է եւ անոր պատպանուրեանք:

Նուրիակալ ու երախտապարտ եմ ու Ս. Յակոբեանց ելլայրուրեան կողմէ ինձի վսահուած Պատրիարքական այս պատօնը



Ամեն. Ա. Պատրիարք Հայրը կը կարգայ իր ուխտի հարողը:

Եթէ: Ու չերմօրէն կ'աղօքենի առ Ասուուծ ու Ձեզի պարզեւ երկար եւ խաշառող կեանք ու բեղուն գործունեւուրին՝ ի փառա Երուսաղէմի Առափելական Ս. Արուին եւ Հայաստանեայ Առափելական Ս. Նկեղեցիին, եւ ի պարձանս հայ ժողովուրդին. ամեն:

Ապա Ս. Պատրիարք Հայրը ժաղովուրդին դարձած արտասահնեց իր ուխտի խօսքը:

կը հաստառուի բարձրագոյն հաւանուրեանքը Յորգանական Հաւիմական Թաղաւորին՝ Նորին Վեհափառուրին Հիւսէկն Առաջինի կողմէ, որով զիս իրաւասու եւ նոյն ասեն պատասխանատու կը կարգէ այս Արուին եւ Ս. Տեղեաց մեջ մեր ազգին ունեցած գարաւոր իրաւունքներուն եւ առանձնաւորհումներուն:

Երջանիկ եմ նոյնակս ու այս գահակալուրեան իրենց ընուհաբանի մասնակցու-

թիւնը կը բերեն մեր նուիրապեսական բարձրագոյն Արառները՝ իրենց Գերատենի ու Մրազան ներկայացուցիչներով, իրական ու գործնական օրինակը տալով մեր եկեղեցւոյ սիրոյ, համերաշխաւրեան եւ մրուրեան նուիրական գործին:

Ու հիմա, եթք կը սատամ հովուական այս ցուցը, կարծես ձեռներեն անոնց՝ որոնք երկար գարեր Աստուծոյ եւ Ազգին սիրովն ու նույրումովիք ծառայեցին օրբազան այս ժառանգութեան, ստրուռ մը կ'անցնիք հոգին, փասնիք իշխանութիւն խորհրդանոսով այդ ամեն իր մէջ ունի օրբազան յոյզերն ու երազները բոլոր անոնց՝ որոնք զարուց ի դարս առին զոյն այնուան օրհնուած իրենց ձեռներուն մէջ, իւրաքանչիւր իր սկրեն, իր նույրումնեն, իր կրակներեն բան մը դնելով այդ խորհրդաւոր մականին: Խող անոնք, երջանիկ հոյլը այդ առաքինիք հայերուն, իրենց անմահութեան կայլեն օրհնեն եւ առաջնորդեն զիս դէպի իմ ծանր պարտականուրեան կատարում:

Գիտեմ քէ դիմնակ եւ զատիչ պարագաներ կը միջամտեն այս զահակալուրեան: Ընտուրիւնները միշտ ծանր դէպելու են մեր տպային եւ կրօնական կեանեին մէջ, յոի պատմական անդրազարդումներով, ճակատագրական ըստուրու շափ հետեւաններով: Զարդէս բերումներ, նախընթաց չորս տարիներու ընթացին, ամբախի կացուրիւն մը ստեղծեցին այս Արոռին տուրջ, որ երասի մը պէտք աներածես է, բնականն կեան կարենալ ստեղծելու համար: Նրկ կը յօժարիմ դժուար այս դերին, պատճառն այն է որ կը հաւատամ այդ երասին, որ զաւերէ ի վեր միշտ արաշազործած է այս նույրական Հաստատուրեան մէջ, Աստուծոյ եւ մարդոց գործակցուրեամբը, ինչպէս նաև կը հաւատամ ուխտակիր եւ միաբանակից եկբայրներու եւ Զեր բոլորին, այս Արոռին նկատմամբ Զեր ունեցած սիրոյն եւ հաւատարմուրեան:

Երկ սպառազինուրին բարոյական եւ նոգեւոր այս ուժերով, երկ մեր ուխտը արդարցնեմք իր արդիւնաւորումներով, Արոռ սալիմի Ս. Յակոբեանց Վանքը պիտի պայծառանայ վերաբանի իր խաղաղ գործունեութեամբը եւ իր մատուցանելիք հանրային ծառայութիւններովը: Դուք եւս, իմ սիրենի

եւ պատուական միաբանակից եկբայրներ, ուխտեալ յաջորդներ այս Արբազան Արխանք նույրուած մեծ հոգիներուն, ինձի հետ եւս նորողեցէք Զեր ուխտերը, զորս կատարած էք այս Սուրբ Սիղանին առջեւ, հաւատարմունքն, սիրով եւ համերաշխաւրեամբ շարունակելու Զեր նույրական գործը, ի փառս Աստուծոյ եւ ի Ժինուրիւն Հայաստանեաց նկեղեցւոյ եւ այս Հաստատուրեանը:

Միացնենք մեր զաները, որպէսզի ժամանակին մէջ ուր կ'ապրինք, մեր միջոցաւ եւս իրազործուի «Աւխոն զոր երդուաւ Աստաւած հարցը մերոց», պահելու համար մեր նկեղեցւոյ եւ ժողովուրեղին կեանից, խաղաղուրեան եւ արդարուրեան մէջ:

Կիբաննիք զնանատել Հաօիմական Ցորդանանի առաջանական առաջարարութեան առաջարարութեան մէջ պատմենաւրիւնը եւ հայցեմք ի Թագաւորէն Թագաւորոց, պահպանել նորին Վեհափառուրիւն Հիւսէյն Ա. Թագաւորի քանիքին կեանիք, ըստինելով իրեն եւ իր ոգնուազարտ բովանդակ գերդաստանին եւ կար օրեւ երջանկուրեան:

Այս առիրով մեր խորին ընուհակալուրինը նոյնակա Երուսալէմի եւ Ս. Տեղեաց Կառավարիշ՝ Նորին Վահեմուրիւն Հասան էլ Քարիպին, Նորին Վեհափառուրեան պատական ներկայացուցչին, որ քառ իր լաւոյնը որպէսզի Երուսալէմի մեր Ս. Արոռը գտնէ իր խաղաղուրիւնը, տարիներու տիու իրադարձուրիւններէն վերջ:

Շնորհակալուրիւն նոյնսկա Զեզի բոլորիդ, պատուական զաւակներ Հայաստաննետոյց Ս. Նկեղեցւոյ, ազօրեցէք հանապազ որպէսզի Տէրն Տէրն ներկանաւոր հանանայապեսն Բիսուս Քիսուս ի խաղաղուրեան պանէ զազին մեր սիրենի, զննացուածն ծողովեան մերոյ, ի հաստատուրեան՝ զնկեղեցին մեր Սուրբ, ի պայծառուրեան՝ զեռանելական Արոռ Սրբոյ Ուխտին եւ զՄիաբանուրիւն նորա:

Հաւատարմին է Աստուծոծ եւ խոսումին մէջ, հաւատարմին լինիմին նաև մենին մեր ուխտերուն մէջ եւ մեր կեանենովիք փառաւուրին զիամս ամենակալին Աստուծոյ, որ է օրինական յաւիթեանս, ամեն:

Այս ատենաբանութենէն վերջ, Ամեն.

յ. Պատրիարք Հայրը կ'իջնէ բեմէն, առաջնորդուած վեց եպիսկոպոսներէն, ու կը բարձրանայ Տեղունդգօր Առաքելական Աստոփ պատուանդանին վրայ, լրբե լրումը և պատկը գահակալութեան այս հանդիսութեանց: Մինչ դպիրները կ'երգին և Ազրիւր վեաց և փրկութեան մերոյ Հոգի Հօր և Արքոյ, . . . չնորհազարդ պայծառացող գրաւազան իշխանութեան մերոյ Հայրապետին . . . : Հոգեսորական դոսը կը մօսանայ զոյգ ու զոյգ և հանդերձ խոնարհաւամբ իր յարգանքն ու չնորհաւորութիւնները կը յայտնէ համբուրելով իր Պետին ու ձեռքի խաչը: Մըրազան Հօր

խարհական օտար հրաւիրեալները և մերազն ժողովուրդը: Եկեղեցիի գաւիթին մէջ նուրին և միանապատուութիւնը կը դիմաւորուի խլացուցիչ ծափակարութեամբ ինչպէս նաև յարգանքի և ուրախութեան արտայայտութիւններով:

ՃԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՊԱՅԱՐԻԱՐՐԱՐԱՆԻ ԴԱՎԱՒՑԻՆ

Պատրիարքարանի ընդարձակ դահլիճը, քովսի սենեակները և Պատրիարքարանի խոշոր անցքը, քիչ կուզային երեք հազարի հասնող օտար և հայ բազմութեան: Պատ-



Նորին Վահեմ. Հառան ել Քարիպ, Առուաղեմի և Ս. Տեղեաց Կառավարիչը,
կը օնուհաւորէ Ս. Պատրիարք Հայը:

Ամբողոյ Պատրիարքական առուած և Պահպանիչ սովոր կը փակուի Եկեղեցիի մէջ կատարուած այս յոյժ տպաւորիչ արարովութիւնը: Յետոյ վերսարին կը կազմուի թափորը և Ս. Աթոռոյ Պատրիարքական օրհնեարկի՝ «Օքնանցէք զ Տէր յօրնութիւն ի նորսի երգեցողութեամբ թափորը կը բարձրանայ Պատրիարքարան: Ամեն. Ս. Պատրիարք Հօր կը հանեին հոգեորական և աշ-

